

Հացեկաց գեղջե³, որդի առն երանելոյ⁴ Վարդան կոչեցելոյ: 2 Ի մանկութեան⁵ տիսն⁶ վարժեալ հելլենական⁷ դպրութեամբն, եկեալ հասեալ ի դռնն⁸ Արշակունեաց թագաւորաց Հայոց Մեծաց, կացեալ յարքունական դիւանին⁹, լինել սպասաւոր արքայատուր հրամանանացն¹⁰ առ հազարապետութեամբն աշխարհիս Հայոց¹¹ Առաւանայ ուրումն¹²: 3 Տեղեկացեալ եւ¹³ հմուտ եղեալ աշխարհական¹⁴ կարգաց¹⁵, ցանկալի եղեալ զինուորական արուեստին իւրոց¹⁶ զաւրականացն¹⁷: 4 Եւ անդէն ուշ¹⁸ եղեալ փութով ընթերցուածոց աստուածեղէն գրոց, որով առ ժամայն լուսաւորեալ եւ թեւամուխ միջամուխ¹⁹ եղեալ²⁰ յաստուածատուր²¹ հրամանացն հանգամանս, եւ ամենայն պատրաստութեամբ զանձն զարդարեալ²², հարկաներ²³ զիշխանացն սպասաւորութիւնսն²⁴:

[Դ]

7 Եւ յետ այնորիկ²⁵ ըստ²⁶ աւետարանական չափուցն²⁷ ի ծառայութիւն Աստուծոյ մարդասիրին դարձեալ, մերկանայր այնուհետեւ զիշխանակիր

1 *Ճա Ճք* Մաշտոց

2 *Ճա Ճք* ի Տարօն գաւառէ

3 *Ճա Ճք չիք* Հացեկաց գեղջե / *de* գեղջէն

4 *bc* երանելոյ / *Ճա Ճք* երեւելոյ

5 *Ճա Ճք* ի մանկութենէ

6 *Ճա Ճք չիք* տիսն

7 *Ճա* Հելլենական

8 *ՍՃա Ճք* ի դռնն / *միւսն*. ի գաւառն

9 *Ճա Ճք* դիւանի

10 *Ճա Ճք* հրամանացն / *միւսն*. հրամանին

11 *Ճա Ճք* Հայոց աշխարհին

12 *b* ուրումն / *Ճա* ուրեմն

13 *Ճա Ճք չիք* եւ

14 *abc*Վ աշխարհակաց / *b* աշխարհակալաց / *Ճա Ճք* աշխարհացն

15 *Ճա Ճք* կարգաւք

16 *Ճա Ճք* արուեստիւ իւրով / *bc* իւրոյ

17 *Ճա Ճք չիք* զաւրականացն / *d* զօրականաց

18 *Ճա Ճք* եւ անդէն ինմին ուշ

19 *Ճա Ճք* թեւակոխ / *c* միջնամուխ

20 *abde*Վ *չիք* եղեալ

21 *c* աստուածատուր

22 *Ճա* յարդարեալ

23 *c* առ ոտն հարկաներ

24 *e* զսպասաւորութիւնսն / *Ճա Ճք* սպասաւորութիւն

25 *Ճա Ճք* այսորիկ

26 *b չիք* ըստ

27 *c* չափու կանոնին / *Ճա Ճք* չափոյն